ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«06» 02 2020 թ.
№ [illegible]

«Վիէյչ Գրուպ» ՍՊԸ (ՀՎՀՀ 01288671) տնօրեն Վ. Հայրիյանին
հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Շիրազի 8/15
էլ. հասցե՝ 5635368@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.07.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-1/5-3 գնման պայմանագրի (Փոփոխություն N 1 առ. 30.09.2019թ.) (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը պարտավոր էր մինչև 30.10.2019թ. մատակարարել 1000 մետր էկրանացված մալուխ (Մալուխ ՏՊՊԷՊ 50*2*0.5), 2000 մետր հաղորդակցման մալուխներ հատուկ կիրառման համար (Մալուխ ԲՊՎԼ), 1500 մետր էկրանացված մալուխ (Մալուխ ՏՊՊ 100x2x0,8), 1000 մետր էկրանացված մալուխ (Մալուխ ՏՊՊ 20x2x0,8) սակայն չի մատակարարել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7 կետի, 2.1.7.1. ենթակետի բ) պարբերության պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. հունվարի 30-ին միակողմանի լուծել է N ԳՀԱՊՁԲ-1/5-3 գնման պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 122553 ՀՀ դրամ, որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև 900005000758 հաշվեհամարին 480600 ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովման (տուժանք) համաձայն:

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

0044, Երևան, Բագրևանդի 5, Հեռ.՝ (+374 10) 29 45 45, Ֆաքս՝ (+371 10) 29 46 13, Էլ.փոստ՝ depart@mil.am
Ереван, Багревванда 5, 0044, Тел: (+374 10) 29 45 45, Факс. (+374 10) 29 46 13, Эл.почта: depart@mil.am
0044, 5 Bagrevand Str., Yerevan, Tel. (+374 10) 29 45 45, Fax: (+374 10) 29 46 13, E-mail: depart@mil.am